




Յոյն

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթներ
1200 Թուման
Հայաստանում 320 դրամ



**ՄԵՆՔ, ՄԵՐ
ՀԵՌՈՒՄՏԱՍԱՆԻՔՆԵՐԸ**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 Սպահանի թեմական խորհրդի հաղորդագրությունը գողացած նկարչությունների վերադարձի մասին
- 3 Ազատ համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը փակում է Քարմեն Ազարեան
- 4 Ճեցապականությունների ժխտման քրեականացման մասին տեսակետներ
- 6 Հայաստան՝ Քաղաքական դաշտը անցեալ տարի
Գայիանէ Աբրահամեան
- 15 Միջին արեւելքի հայության ապագան
Հրաչ Քալսահակեան
- 18 Ալֆրեդ Եաղուբզադէն շահել է «Սկուպ» մրցանակը
- 20 Փողոցայի արւեստ
- 23 Շաղրանկար՝ Քամբիզ Դերամբախշ
- 24 2011 թականի մարզական դէպքերը
Արման Տէր Ստեփանեան
- 26 Ժամանց

Մշակութային եւ Հասարակական

Հոյս

Երկշաբաթաթերթ

Ե օրի, քիւ114, Յունար 11, 2012,
1200 քուման
Հայաստանում 320 դրամ



- 8 Մենք, մեր հեռուստատեսությունը
- 8 Հայկական սերիալները եւ ներկայ կեանքը
Կոլիա Տէր Յովհաննիսեան
- 9 Հայկական հեռուստաալիքները
սփիւռքահայի ակնոցով
Քարմեն Ազարեան
- 13 Ձուտ տուր, կեանք պարզելի
Կոլիա տէր Յովհաննիսեան

Պ ա Ր Ա Կ Ե Ր Է Ն Բ ա ժ ի Ն

- | | | | | |
|---|---------------------------------------|----------------|--|--|
| 2 | Այս համարի հայերէն էջերում | ոիսկերը | | Ժառանգությունը |
| | | Ջիւան Թաբիբեան | 10 | Մի քանի եզրերի թարգմանության մասին |
| 3 | Նախագահ Աիմադինեժադի այցը Հայաստան | 4 | Հեղինակի մասին | |
| | Թուրաջ Խոսրաւի | 5 | չկայ մի սփիւռք սփիւռքների կառույցները | 12 |
| | | 5 | Քարեփոխումներ՝ սփիւռքի նոր կառույցների իւրայատկությունները | |
| | | 7 | ամբողջատիրականության | |
| 4 | Սփիւռքի կառույցների դեմոկրատականացման | 8 | | Իրանահայերի վերադարձը Հայաստան (ք. մաս)
Ռուզանա Ծատուրեան
Սաթենիկ Մկրտչեան |

Յոյս

Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ

Արտօնատէր՝
Լեւոն Ահարոնեան

Խմբագիր՝
Ռոբերթ Սաֆարեան

Խմբագրական կազմ՝

Քարմեն Ազարեան,
Լիա Խաչիկեան,
Գարուն Սարգսեան,
Արմինէ Մելիք-Իսրայելեան

Գեղարւեստական ձեւաւորում՝
Լիա Խաչիկեան

Հայերէն բաժնի սրբագրիչ՝
Քարմեն Ազարեան

Կայք
Քաջիկ Սաֆարեան

Մարզական
Արման Տէր Ստեփանեան

Բաժանորդագրութիւն
Քաթրին Եաղուբի

Հասցէ՝

Թեհրան, Էնդելար պողոտայ,
Վալի Ասր քառուղի
համար 1048
66495180 66492693

Հեռախօս-հեռապատճէն՝
66495208

hoosy@inbox.com

www.hoosy.com



Ս. ԱՄԵՆԱԹՐԿԻՉ ՎԱՆՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՑ ԳՈՂԱՅԻԱԾ ՀԻՆԳ ՊԱՏԱՌԻԿ ԷՋԵՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՎԵՐԱՂԱՐՁԻՆ ԵՆ



ՄՊԱՀԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սիրելի ժողովուրդ?

Ուրախութեամբ յայտնում եմք, որ Թեմիս ազգային իշխանութիւնների հետեւողական ջանքերի եւ երկրի իրաւապահ մարմինների աչալուրջ հետապնդումների շնորհիւ Ս. Ամենափրկիչ Վանքի Թանգարանից գողացւած գրչագիր մատեանների 5 պատառիկ էջերը եւ երկու նկարչութիւն շրջանակները պաշտօնական մամակագրութիւններից ու գործընթացից յետոյ, թւականիս դեկտեմբերի 27-ին, իրաւապահ մարմինների կողմից ու ներկայութեամբ Մշակութային Ժառանգութեան Կազմակերպութեան Սպահանի գերատեսչութեան պատկան բաժնի ներկայացուցչի, անխափան ու անվնաս կերպով յանձնւել են Խորհրդիս լիազօր ներկայացուցիչներին եւ վերադարձւել են Առաջնորդարան:

Այս առիթով շնորհաւորում եմք Թեմիս ժողովրդին եւ իրանահայութեանը մշակութային արժէքաւոր գանձերի վերադարձման կապակցութեամբ:

Սբ. Ա. Վանք

29 Դեկտեմբեր 2011

Սպահանի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդ

«ՅՈՅՍ»-Ի PDF ՏԱՐԲԵՐԱԿԸ ԱՆՎՃԱՐ ՀԱՍԱՆԵԼԻ Է ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Այցելէք «Յոյս»-ի անլայն արխիւը

Արդեօք գիտէք, որ «Յոյս»-ի կայքում կարող էք դանլոդ անել երկշաբաթաթերթի վերջին 3 տարիների համարների PDF տարբերակը: Միայն այցելէք մեր անլայն արխիւը.

<http://www.hoos.com/Linkbar%20Files/Archive.htm>

Յատկանշական է, որ նախքան PDF -ը ամբողջութեամբ դանլոդ անելը, հնարաւոր է դիտել համարի բովանդակութիւնը եւ կարդալ նիւթերի ընտրանին:



ՏԵՆՈՒՐ ՄԻ ՓԱՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

ՓԱԿՈՒՄ Է ԻՍԼԱՄԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՏԱՐ ԼԵՃՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՅՈՑ ԼԵՃԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԲԻՈՆԸ

Քարմեն Ազարեան

Շուրջ 15 տարի է, ինչ թեհրանի Իսլամական Ազատ համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում բացվել է հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը: Ամբիոն, որն այսքան տարի զանազան դժարություններով հանդերձ, եւ ամէն տարի քանի տասնեակ, սկզբում նոյնիսկ 100-ից ավել հայ եւ պարսիկ հայերենագէտներ դաստիարակելով, ցաւօք այսօր կանգնած է փակման տխուր փաստի առջեւ: Չգիտես ում եւ ինչ ասես, որ քեզ կրկնած չլինես: Վերջին շրջանում ում եւ ուր, որ պէտք էր, զգուշացրել ենք այս մասին եւ օգնություն խնդրել: Այս մասին «Յոյս»-ում էլ գրեցինք՝ յուսալով, որ ողջ համայնքը քայլեր կը ձեռնարկի հայագիտական այս միակ ակադեմիական կենտրոնը թեհրանում պահպանելու համար: Ցաւում ենք, որ դարձեալ ձայն բարբառոյ յանապատի: Այնուամենայնիւ, ելնելով մեր համայնքի իսկ շահից, ակելորդ չենք համարում մէկ անգամ եւս բարձրաձայնել մեր մտահոգութիւնը:

Այո, կրկնում եւ կրկնում ենք, ով հայ ժողովուրդ, մենք ունենք հայերենագիտական պաշտօնա-

կան համալսարան, որը հակառակ նրա դասախօսական կազմի, յատկապէս դոկտ.Անդրանիկ Սիմոնեանի բոլոր ջանքերի, արդէն զրկւել է ուսանողութիւնից եւ փակոււմ է: Այս կապակցութեամբ զանազան առիթներով խօսել է թէ մեր ազգային մարմինների եւ թէ պետական պատասխանատու անձանց հետ, բայց իզուր: Վերջին քանի տարիների ընթացքում, երբ ընդունուող ուսանողների թիւը 10-ից չէր անցնում, նման օրին հասնելը այնքան էլ անսպասելի չէր: Տեղն էր՝ հէնց այդ ընթացքում, գոնէ ազգային մարմինների կողմից ակելի լուրջ ու գործնական քայլեր ձեռնարկւէին, որպէսզի վառ պահւէր այս բարձրագոյն կրթական բացառիկ օջախը: Պէտք է դպրոցներում յատկապէս միջնակարգ օղակում քարոզչութիւն տարւէր այդ մասին եւ չբաւարարւէին միայն ուսուցիչ դիմորդներ ուղարկելով, որոնց թիւը խիստ սահմանափակ էր: Կարելորդ աշակերտութիւնն էր՝ մեր երիտասարդութիւնը, որոնք մեծ մասամբ անտեղեակ են նման մի կենտրոնի գոյութեան մասին, եւ երբ պատահաբար լսում են զարմացած

ասում են «Մի՞թէ այդպիսի համալսարան էլ կայ»:

Ինչպէս տեղեկացանք, վերջին շրջանում թէ՛ ԹՅԹ առաջնորդի՝ Տ.Սեպուհ Արք.Սարգսեանի եւ թէ՛ Իսլ.Խորհրդարանում հայ պատգամաւորների՝ Գեւորգ Վարդանի եւ Ռոբերտ Բեգլարեանի կողմից այս համալսարանի ղեկավարութեանն ուղղւած նամակներ են յղւել՝ շեշտելով այս կենտրոնի գոյութեան կարեւորութիւնը եւ նրա գործունէութեան շարունակման անհրաժեշտութիւնը:Սակայն հայիրանական քաղաքատնտեսական ու մշակութային օրաւոր զարգացող յարաբերութիւններով եւ կնքւող իրարայաջորդ պայմանագրերով հանդերձ, փաստօրէն հայերենագիտական այս միակ ամբիոնը թեհրանում վերջնականապէս փակոււմ է: Ներկայ պայմաններում մեզ մնում է յուսալ եւ ոչ մի ջանք չխնայել: Եթէ մի դպրոցի փակման համար այդքան ցաւում ենք ու բողոքում, հապա ինչո՞վ կարելի է բացատրել այս անտարբերութիւնն ու լռութիւնը՝ հայոց լեզվի եւ գրականութեան բարձրագոյն այս օղակի կորստի վերաբերեալ:

هيات تحريره نشریه هویس

با سلام و احترام

خجسته ايام فرخنده و مبارک تولد حضرت عیسی مسیح (ع) و آغاز سال جدید میلادی را به دست اندرکاران آن نشریه و عموم هموطنان ارمنی در سراسر کشور تبریک و شادباش می گویم. امیدوارم دراین سال، شاهد جهتی همراه با صلح و دوستی و به دور از جنگ و خشونت باشیم. سلامتی و توفیق روزافزون همه ایرانیان به ویژه هموطنان مسیحی را از خداوند متان خواستارم.

سعید تقوی

مسئول اداره امور اقلیت های دینی

ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԽՏՄԱՆ ՔՐԷԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՍԱԿԷՏՆԵՐ

Դեկտեմբերի 22-ին, Ֆրանսիայի խորհրդարանը վավերացրեց հայոց ցեղասպանության հերքումը քրեական հանցանք համարելու օրենքը: Օրենքի անցկացումը զայրացրեց Թուրքիային. Թուրքիայի ղեկավարների կարծիքով դա արել է ֆրանսահայության քվեները ձեռք բերելու նպատակով: Օրենքը դեռ պիտի վաւերացւի Ֆրանսիայի սենատում: Ոմանք խօսել անել այն մասին, որ նման օրենք սահմանափակում է խոսքի ազատութիւնը: Ստորեւ ներկայացնում ենա մի քանի տեսակէտ այդ մասին:

Արա Պապեան Մոդուս վիւենդի կենտրոնի ղեկավար

... Ֆրանսիայի Ազգային ժողովի վերջին քննարկումների առիթով ոմանք, մինչեւիսկ հայեր, գրում էին եւ են, որ ցեղասպանութիւնների հանրային ժխտման քրեականացումը սխալ է, քանզի սահմանափակում է ազատ խօսքը, ինքնուրոյն կարծիք ունենալու իրաւունքը:

Այդ ո՞ր օրւանից յանցագործութեան պաշտպանութիւնը դարձաւ «խօսքի ազատութիւն» կամ «կարծիք ունենալ»: Գնացէք, օրի-



նակ, Կանադա եւ հանրայնօրէն «կարծիք արտայայտէք» որ, օրինակ, սեւամորթները կամ հայերը փնթի են կամ ալարկոտ: Գիտէք չէ՞ ձեզ ինչ կանեն՝ «ատելութիւն հրահրելու» (hate speech) համար՝ դուք կը յայտնւէք բանտում կամ կը կրէք այլ պատիժ: Գերմանիայում ասէք, որ Դիտլերը իր պատճառներն ունէր հրեաներին կոտորելու համար: Մի ժխտէք Դոլքոստը, այլ պարզապէս փորձէք որոշակի արդարացում-հիմնաւորում բերել դրա համար: Զետեւանքները կարծում են ինձանից լաւ գիտէք: Բա ո՞ւր մնաց «խօսքի ազատութիւնը»: Թէ՞ որոշ մարդիկ

կարծում են, որ հայերս աւելի ժողովրդավար ենք, քան կանադացիք կամ գերմանացիք:

Ընթացիկ երեւոյթները հասկանալու համար անհարաժեշտ է ընդգծել մի շարք կարեւոր հանգամանքներ՝ ցեղասպանութիւնը, այդ թւում եւ յատկապէս հայերի, զուտ պատմական անցք չէ, անցեալի իրադարձութիւն: Այն ծանրագոյն յանցագործութիւն է, ինչպէս բնութագրում են իրաւագէտները՝ «յանցագործութիւնների յանցագործութիւնը» (crime of the crimes), քանզի այն իր մէջ պարունակում է մի շարք ծանրագոյն յանցագործութիւններ՝ սպանու-

թիւն, բռնաբարութիւն, մանկապղծութիւն, ստրկավաճառութիւն, մարդուն ապօրինի ազատութիւնից զրկում, ուրիշի ունեցւածքի իւրացում կամ փչացում, մշակութային արժէքների ոչնչացում կամ իւրացում եւ այլն: Ըստ էութեան, այս յանցագործութիւնն իր մէջ ներառում է քրեական ողջ օրէնսգիրքը:

Հետեւաբար, ցեղասպանութեան հանրայնօրէն ժխտումը յանցագործութիւնն արդարացնելու փորձ է, ըստ էութեան յանցագործութեան խրախուսում է, իսկ դա արդէն ոչ միայն յանցակցութիւն, այլեւ յանցագործութիւն: Կրկնում են, ցեղասպանութիւնը պատմական երեւոյթ չէ, որի մասին լինեն տարբեր կարծիքներ, այն յանցագործութիւն է, իսկ յանցագործութիւնն ունի միայն մէկ վերաբերմունք՝ դա պատիժն է, իսկ պատժի կիրառման անհնարինութեան դէպքում՝ դատապարտումը, որոնց նպատակներից է յանցագործութեան կանխարգելումը: Ոչինչ չի խրախուսում ոճրագործին եւ դրում նրան նոյն արարքը կրկնելու, որքան անպատիժ մնացած յանցագործութիւնը:

«Առաւօտ» օրաթերթ

թրքագէտ. Թուրքիայում հակահայկական ալիք կը բարձրանայ
Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից օրերս ընդունւած Հայոց ցեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագծին արձագանքելով՝ Ստամբուլում լոյս տեսնող «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Ռոբեր Քոփթաշը Euronews հեռուստաալիքին տւած հարցազրոյցում բացասական գնահատական էր տւել օրինագծին եւ կարծիք յայտնել, որ օրինագիծը կարող է հակառակ ազդեցութիւնն ունենալ: Քոփթաշը նշել էր, որ օրինագծի ընդունումից յետոյ Թուրքիայում սկիզբ է առել հակահայկական եւ հակաթուրքական հերթական հիսթերիա:

ա: Քոփթաշը յայտնել էր, որ օրինագծի ընդունումը կը բարդացնի սոցիալական երկխօսութիւնը: «Դա նոր խաղաքարտ կը տայ ազգայնականներին եւ նրանց, ովքեր մերժում են անցեալը: Եւ եթէ Ֆրանսիան է սահմանափակում խօսքի ազատութիւնը, ապա Թուրքիայում հաստատ նման քայլ անելու արդարացում կը գտնեն», - ասել էր «Ակօս»-ի խմբագիրը:

Այսօր «Նովոստի Արմենիա» մամուլի կենտրոնում ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն Ռուբէն Սաֆրաստեանին խնդրեցինք մեկնաբանել «Ակօս»-ի խմբագրի այս յայտարարութիւնը եւ հարցրինք, թէ ինչ հետեւանքներ կարող է ունենալ Թուրքիայի հայերի համար օրինագծի ընդունումը:

«Իսկապէս Թուրքիայում կարող է նոր հակահայկական ալիք բարձրանալ, եւ դա շատ հաւանական է, բայց միւս կողմից բնութագրել Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից ընդունւած օրինագիծը որպէս ազատ արտայայտման իրաւունքի սահմանափակում, իմ կարծիքով դա կոպտագոյն սխալ է: Մարդկութեան պատմութեան մէջ կան այնպիսի երեւոյթներ, որոնց ժխտումը յանցագործութիւն է: Հրեաների ցեղասպանութիւնը՝ հոլոքոստը, շատ երկրներում քրեականացւած է: Նոյն Ֆրանսիայում դեռ 20 տարի առաջ՝ 1990 թականին ընդունել է օրէնք, որը քրեականացրել է հրեական ցեղասպանութեան՝ հոլոքոստի ժխտումը: Այնպէս որ խառնել երկու տարբեր երեւոյթներ՝ այսինքն ծանրագոյն յանցագործութիւնը կեղծելու, ժխտելու սահմանափակումը ազատ արտայայտման իրաւունքի սահմանափակման հետ, սխալ է», - պատասխանեց Ռ. Սաֆրաստեանը եւ բերեց սեփական օրինակը. «2000-2001 թականներին, երբ Ֆրանսի-

այի խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող օրէնքը, այդ ժամանակ ես Ստամբուլում էի, եւ վախը հայերի մօտ շատ մեծ էր, որովհետեւ ճնշումը շատ կտրուկ ուժեղացել էր նրանց վրայ: Եւ նրանք վախենում էին, որ կարող են կրկնել 1955 թականի Սեպտեմբերի դէպքերը Ստամբուլում, երբ քաղաքական նկատառումներից ելնելով՝ իշխանութիւնները կազմակերպեցին հիմնականում յոյների եւ հայերի էթնիկական զտումներ: Ստավախութիւն կար, որ նմանատիպ զտումներ կարող են տեղի ունենալ: Հիմա էլ կարծում են, այս մի քանի ամսւայ ընթացքում, մինչեւ Սենատն ընդունի համապատասխան օրէնքը՝ այս շրջանը շատ ծանր կը լինի հայերի համար»:

Մեկնաբանելով թուրք-ֆրանսիական յարաբերութիւնների հնարաւոր վատթարացումը՝ Ռուբէն Սաֆրաստեանը կարծիք յայտնեց, որ այդ յարաբերութիւնների վատթարացումից կը տուժի առաջին հերթին Թուրքիան, քանի որ նա տնտեսապէս կախւած է Ֆրանսիայից. «Ակնյայտ է, որ Թուրքիան յայտնել է իր պատրաստած ծուղակում, որովհետեւ ինչ էլ, որ անի, ինչ պատժամիջոցներ էլ որ մտցնի Ֆրանսիայի դէմ, դրանք մի կողմից ծիծաղ կարող են առաջացնել եւ տեսնում ենք դրա օրինակը՝ Թուրքիայում դեմոկրատական կուսակցութեան ղեկավարը ծիծաղաշարժ համարեց այն պատժամիջոցները, որ նախատեսում է Թուրքիան: Միւս կողմից իրական վնասը կը լինի Թուրքիային, որովհետեւ գիտենք, որ ֆրանսիական կապիտալը մեծ դիրքեր ունի ներքին շուկայում իր ներդրումներով: Եւ Թուրքիայի աւտոմոբիլային շուկայի 20 տոկոսը գտնւում է ֆրանսիական ընկերութիւնների հսկողութեան տակ»:

Լուսինէ Խաչատրեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԸ ԱՆՅԵԱԼ ՏԱՐԻ

**ԵՐԿԿՈՍՈՒԹԵԱՆ, ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԴԱՇՏՈՆԵԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՉ
ՀԵՌԱՅՄԱՆ/ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆԵՐԻ, ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀՐՄՇՏՈՅԻ ՏԱՐԻ**

Գայիանէ Արրահամեան



2011-ի քաղաքական տարին մեկնարկեց ու աւարտուեց ներքաղաքական ինտրիգներով, բարձրաստիճան պաշտօնեաների հրաժարականների շքերթով, ինչն էլ տարին բնորոշեց որպէս նախընտրական դիրքորոշումների ճշգրտման, ամրապնդման ու պայքարի մեկնարկի տարի: Տարին նշանաւորուեց նաեւ անմախաղէպ երկխօսութեամբ, որը ծաւալեց իշխանութեան եւ հիմնական ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) միջեւ, որն ամռանը մի քանի շաբաթ շարունակելուց յետոյ դադարեց: Կողմերը փոխադարձ մեղադրանքներ հնչեցրեցին միմեանց հասցէին՝ երկխօսութիւնը տապալելու համար:

2011-ն առանձնայատուկ էր

կոալիցիոն գլխաւոր դերակատարների՝ Հանրապետական ու «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների առնակատումներով, որն սկսեց տարեսկզբին ու փոքր-ինչ հանդարտուեց կոալիցիոն յուշագրի ստորագրումից յետոյ:

Ստորագրուած յուշագիրը հայաստանեան ներքաղաքական կեանքում նոր մշակոյթ ձեւաւորեց, որը սակայն քննադատութեան արժանացաւ արտակոալիցիոն գրեթէ բոլոր ուժերի եւ անկախ վերլուծաբանների կողմից:

Քաղաքական գարունը բացւեց «Ժառանգութեան» հիմնադիր Րաֆֆի Յովհաննիսեանի՝ Ազատութեան հրապարակում (այդ ժամանակ դեռեւս փակ էր հիմնական ընդդիմութեան համար) «Ծոն

ազատութեան» 15-օրեայ հացադուլով, որն էլ ջրի երես հանեց ընդդիմադիր երկու թելերի՝ Հայ ազգային կոնգրեսի ու «Ժառանգութեան» միջեւ տարածայնութիւնները՝ հասնելով անգամ վիրաւորանքների:

ՀԱԿ-ի համար տարին հակասական էր. մի կողմից յաղթանակներ՝ Ազատութեան հրապարակի վերանաւաճում, համաներում, իշխանութեան հետ երկխօսութեան հնարաւորութեան ստեղծում, միւս կողմից՝ ներքին բախումներ:

ՀԱԿ-ի իշխանութիւն երկխօսութեան առկախումից յետոյ՝ Սեպտեմբերին, ընդդիմադիրները սկսեցին հանրահաւաքային պայքարի նոր շրջանը, որը Հոկտեմբերին ուժգնացաւ՝ վերածելով շուրջօրեայ, սակայն անարդիւնք

պայքարի:

Տարին նշանաւորւեց հրաժարականների շքերթով, որոնք, ի տարբերութիւն նախորդ տարւայ փոխատեղումների, բնորոշւեցին ոչ թէ «կոսմետիկ բարեփոխումներով», այլ զուտ «նախընտրական դիրքաւորմամբ»:

Օրէնսդիր մարմնի լիազօրութիւնների հնգամեայ ժամկետը լրանալուց կէս տարի առաջ հրաժարականի դիմում ներկայացրեց պետութեան երկրորդ դէմքը՝ Աժխօսնակ Յովիկ Աբրահամեանը՝ յայտարարելով, թէ պատրաստուում է գլխաւորել ՀՀ նախընտրական շտաբը 2012-ի Մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններում: Աբրահամեանը դարձաւ անկախ Հայաստանի արդէն հինգերորդ խօսնակը, որ չպաշտօնավարեց մինչ խորհրդարանի լիազօրութիւնների ակարտը:

Աբրահամեանին փոխարինեց ՀՀ մէկ այլ ներկայացուցիչ՝ փոխխօսնակ Սամէլ Նիկոյեանը: Վերջին պահին իր թեկնածուին առաջադրեց խորհրդարանական ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութիւնը, որը չկարողացաւ լուրջ մրցակցութիւն ստեղծել կոալիցիայի խոշոր քաղաքական ուժի՝ ՀՀ թեկնածուի հետ պայքարում:

Սակայն հրաժարականներն այսքանով չաւարտւեցին. իր դիմումի համաձայն պաշտօնից հրաժարւեց ՀՀ նախագահի փեսայ Միքայէլ Մինասեանը՝ յայտարարելով, թէ պատրաստուում է օգնել Յովիկ Աբրահամեանին ՀՀ-ի նախընտրական շտաբը ղեկավարելու գործում:

Հրաժարական տւած բարձրաստիճան պաշտօնեաների շարքում էին նաեւ 11 ամիս պաշտօնավարած Երեւանի քաղաքապետ Կարէն Կարապետեանը եւ

նոսիկանապետ Ալիկ Սարգսեանը:

Մինչ իշխանական վերնախաւում վերադասաւորումները շարունակւում էին, «Հանրապետական»-«Բարգաւաճ» առճակատման նոր բռնկումներ սկսւեցին ՀՀ վարչապետ հանրապետական Տիգրան Սարգսեանը՝ «կոտրած տաշտակի» վերլուծութիւն-առաջարկ արեց ԲՀ-ին:

Աշնան վերջը ԲՀ-ականների համար դժարին ժամանակաշրջան էր, երբ սկսեց, Նաիրա Զորաբեանի բնորոշմամբ՝ «վիուկների որսը». թմրանիւթերի հետ կապւած մեղադրանքներով ձերբակալւեցին կուսակցութեան մի քանի անդամներ եւ աջակիցներ, իսկ այնուհետեւ լրատւամիջոցները տեղեկութիւններ տարածեցին, թէ հնարաւոր է, որ ՀՀ-ն եւ ԲՀ-ն ընտրութիւններին մասնակցեն կոալիցիոն համամասնական ցուցակով:

Այս տարի առանձնայատուկ կերպարով հանդէս եկաւ ՀՀ տեխնոկրատ վարչապետ Տիգրան Սարգսեանը, որը, դուրս գալով իր «դասախօսի» կերպարից, յայտնւեց մէկ այլ դերում՝ յիշելով իր պապի խորհուրդը. «Կեանքում ընկերութիւն չանել էմ մարդկանց հետ, որոնք չեն խմում»:

Խորհրդարանական փոքրամասնութիւն կազմող կուսակցութիւններից Դաշնակցութիւնն էլ տարւայ վերջին մոռացութեան տւեց իր ընդդիմադիր կեցածքը եւ կառավարութեան հրաժարականի, քննադատութեան հետ մէկտեղ ընտրեց իշխող Հանրապետականի Աժ թեկնածուին: Նման քլէարկութիւնն ի ցոյց դրեց «Ժառանգութեան» եւ ՀՀ-ի միջեւ առկայ մրցակցութիւնը:

2011-ի ընթացքում չմոռացւեց նաեւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը: Մինչ տարւայ

սկզբին չէին դադարում ՀՀ երկրորդ նախագահ Քոչարեանի՝ մեծ քաղաքականութիւն վերադառնալու մասին քննարկումները, Սեպտեմբերին Քոչարեանն ինքը պատասխան տւեց բոլոր հարցերին՝ յայտարարելով, որ «չի բացառում» իր վերադարձը:

Սակայն տարին առանձնացաւ դրսից հնչող կոշտ քննադատութեամբ ու դրանց հեղինակների բարձր դիրքով: Իշխանութիւնների համար սառը ցնցուղ էր Սեպտեմբերին սփիւռքի կազմակերպութիւնների ղեկավարների եւ ներկայացուցիչների համահայկական համաժողովում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի ելոյթը, որն իշխանութիւններին մեղադրեց Հայաստանը «հայաթափելու» եւ երկրում «ներքին արինահոսութիւն» ստեղծելու մէջ:

Դրան յաջորդեց յայտնի ռուսաստանաբնակ գործարար Լեւոն Հայրապետեանի քննադատութիւնը երկրում կոռումպացւած համակարգի, տնտեսութեան կործանման մասին:

Սակայն առաւել խոցելի ու ազդեցիկ էր ֆրանսահայ մեծ շանսոնիէ Շառլ Ազնաւուրի խօսքը՝ իշխանութիւնների կողմից «ներքին ցեղասպանութիւն» իրականացնելու վերաբերեալ: Սակայն հետագայում պետական լրատւական գործակալութեան միջոցով Շէլյցարիայում Հայաստանի դեսպան Շառլ Ազնաւուրը հերքեց, թէ նման բան է ասել, սակայն շատերն այս հերքումը որակեցին զուտ դիւանագիտական, դրուած քայլ:

Աղբիւր՝

www.armeniannow.com

ՄԵՆՔ, ՄԵՐ ՀԵՌՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱԼՆԵՐԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԸ

Կոլիա Տեր Յովհաննիսեան


Անառարկելի է այն երևույթը, որ վերջին տարիներին, հայկական սերիալները կարողացել են ներթափանցել Հայաստանի եւ Սփիւռքի հայ հասարակութեան կեանքի մէջ, դարձել նրանց «պարապ վախտի խաղալիքը», երբեմն էլ՝ ոչ պարապ վախտի: Դեռ աւելին, քաղաքական կամ օրւայ վիճայարոյց խնդիրներից յետոյ հայկական սերիալները առատ միւթ են մատակարարում ընտանեկան կամ ընկերական մտեմիկ հաւաքներին ու նոյնիսկ գործնական հանդիպումներին, ընդ որում, մտքերի բուռն փոխանակութիւն է ծաւալւում ոչ միայն սերիալների դէպքերի ընթացքի այլեւ դէմքերի ու նրանց ունեցած ինտիմ կեանքի մասին:

Հետաքրքիր է նաեւ այն երևույթը, որ, սերիալների մասին արտայայտւած կարծիքները, առհասարակ, քննադատական են, շատ քչերն ունեն լրիւ դրական մօտեցում, բայց դրանով հանդերձ, ճիշտ ժամին, բոլորն անխնայութեւ, թէ դէմ, մեխլւած հեռուստացոյցի առջեւ՝ դիտում են հերթական սերիան, լարւում են, ուրախանում, տխրում, երբեմն արտասւում եւ դժգոհ փնթփնթում, երբ գովազդ է յայտնւում էկրանին:

Հարց է առաջանում, սերիալների նկատմամբ աճող հետաքրքրութիւնն ի՞նչ ազդեցութիւն կունենայ մեր հասարակութեան մշակութային կեանքի ծելաւորման վրայ: Ո՞վ կը շահի, կամ ո՞վ կը լի-


նի տուժող կողմը՝ հի՞մ, թէ՞ նոր սերունդը. միայն ասել, որ պարզապէս սերիալները վատ են կամ ունեն բացասական ազդեցութիւն, ճիշտ չէ: Հէնց այն փաստը, որ հեռուստադիտողների քանակը մեծապէս գերազանցում է ընթերցանութեամբ զբաղողների քանակին, դա շատ բան է ասում: Սա է, որ կայ: Պէտք է ընդունել, որ հիմնովին փոխւել են 21-րդ դարի մարդու նախասիրութիւնները: Գիրքը, գրականութիւնը եւ իսկական արւեստի միւս ճիւղերը եթէ չեն մղւել յետին պլան, ապա նախկինի պէս առջեւում էլ չեն: Դա աւելի յատկանշական է երիտասարդ սերնդի մօտ. իրօք շատ բան է փոխւել, սկսած հագուկապից, վերջացած էլեկտրոնային նորագոյն սարքաւորումներով:

Ոմանք, հեռուստատեսութեան ծրագրերը համարելով հասարակութեան «գլուխը խառնելու» եւ ժողովուրդներին կառավարելի դարձնելու միջոց՝ ստեղծւած «տխուր» իրավիճակի համար մեղադրում են պետութիւններին. «Կառավարութեան վերելի անդամները ո՞ր ոլորտի նկատմամբ հետաքրքրութիւն ունեն, դա էլ ծաղկում է,- գրում է իմ բարեկամուհի՝ Արմինէ Պետրոսեանը Քեւաւառից (տես <http://armgrak.info/node/14>),- իսկ գրականութիւնը «մոդայիկ» չէ, որովհետեւ ոչ բոլորն են կարողանում հասկանալ, ըմբռնել իսկական արւեստի գործերը, դրա համար էլ աւելի լաւ է միջակութիւն քարոզել, սե-



րիալներով ու անիմաստ հեռուստածրագրերով յագեցնել հեռուստաթերը, որ հայ մարդու միտքը տարւի միայն սիրելի սերիալի սիրելի հերոսի ապրումներով, որ մոռանայ իր տնտեսական ու քաղաքական վիճակը, որ դառնայ ցածր ճաշակի, նեղ աշխարհայեացքի ու տարօրինակ լեզւամտածողութեան կրող: Սերիալներ, ռաբիս, ժամանցային թեթեւ ծրագրեր ամէն տեղ էլ կան ու որոշակիօրէն պէտք են մարդուն, որպէսզի մի փոքր ցրի, բայց ոչ այնքան, որ նոյնիսկ առաջինն համարող, մեր երկիրը աշխարհին ներկայացնող

ՌԻՍՏԱՍԱՆԻՔՆԵՐԸ



հեռուստաալիքով օրւայ մէջ երեք անգամ կրկնեն նոյն ցածրաճաշակութիւնը, որ բոլորը «ի վիճակի լինեն» տեսնել...»:

Այնուամենայնիւ, թւում է, թէ սնկի պէս աճող հայկական հեռուստասերիալների դէպքում պետական «պատուէր»-ից աւելի՝ զօրեղ լծակ են մեր օրերի մարդու «մոդայիկ» պահանջները եւ այն կախարդական արկղը, որ կոչւում է՝ հեռուստացոյց:

Դեկտեմբեր, 2011

ՀԱՅԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՍԱՆԻՔՆԵՐԸ ՍՓԻՌՔԱՀԱՅԻ ԱԿՆՈՅՈՎ

Քարմէն Ազարեան

Արդէն տարիներ է, ինչ սփիւռքը վայելում է հայրենի արբանեակային հեռուստաալիքների հաղորդումները: Երեւի դեռ շատերիս յիշողութիւնից չի ջնջւել ոչ շատ հեռու անցեալում հայրենի ռադիոյի՝ հեռուհեռու թւացող, իրականում շատ մօտիկ, հայրենիքի ծայնը՝ «Երեւանն է խօսում»-ը, եւ Յ. Բաղաւեանի ու Օ. Զամբարծումեանի

երգերը, որոնք մեր հոգիները լցնում էին առեղծաճային այդ աշխարհի հանդէպ անասելի կարօտով: Թերեւս ոչ ոք այն օրերին չէր կարող նոյնիսկ երեւակայել, որ այսօր մօտ ապագայում աշխարհն այնքան է փոքրանալու, եւ յատկապէս մեզ՝ իրանահայերիս համար հայրենիքը այնքան է մերձեանալու, որ ոչ միայն կարող ենք ուզած պահին այցի գնալ, այլեւ

Մփիռքահայր յաճախ անյարմար է գտնում այսպիսի կոպիտ տեսարանները: Ասում են՝ սրանք հային վայել չեն: Հային վայել չեն գտնում մաեւ սերիալներում կրկնող սեռական յարաբերութիւններին վերաբերող դրւագները: Գիտենք, որ մման ֆիլմեր բոլորն էլ նայում են արբանեակային տարբեր ալիքներով, բայց հայերէնովը ճիշտ չեն գտնում՝ «Դա հային վայել չէ, մեր երեխէքը ի՞նչ պիտի սովորեն դրանցից»:



Չախից առաջինը, արդէն գիտէք, «Վերվարածներն ընտանիքում» սերիալի միամիտ, բայց բարի իրանահայ Արթին է: Նրա պարզամտութիւնը եւ պարսկական մագոլ ու առողջամտութեամբ հայերէնը երբեմն վիրաւորում էին իրանահայ հեռուստադիտողին. ոմանց բում էր թէ ծաղրում են մեզ: Ի դէպ, դերը կատարում է Արթուր Յակոբեանը, որը բնիկ գիւմրեցի է, եւ ոչ պարսկահայ: Դա մեր պատկերն է հայաստանցու տեսանկիւնից:





Մեծ Մամեն, կրկին «Վերվարածներն ընտանիքում» սերիալում, Մերգեյ Դանիլեւանի դերակատարութեամբ: Նրա կերպարը յորինել է իբր իրանահայ մեծ մամայի օրինակով, սակայն մենք հասկանում ենք, որ իրանահայ մեծ մաման ոչ այդպէս է խօսում, ոչ էլ այդքան «ազատամիտ» է ու ագրեսիւ: Յամենայն դէպս, իրանահայ դիտողը, յատկապէս երեխաները, սիրում էին նրան: Հեռուստադիտողների մի մասն էլ, որ ընդհանրապէս կատակ չեն ընդունում, բնադատում էին նրան:

Այս տղաների ռուսական ոճով հայկական հումորը հաճելի է մեզ էլ, չնայած երբեմն համը հոտից հանում են եւ աւելորդ «բաց» են սեռական հարցերի առումով: Թէեւ կան բաներ, որ լաւ չենք հասկանում՝ մասամբ Հայաստանի կենցաղային մանրամասնութիւններին ծանօթ չլինելու, մասամբ էլ ռուսերէն չիմանալու պատճառով, այնուամենայնիւ հաճելի են նրանք: «32 ատամ»-ի եւ յետոյ «Վիտամին ակումբ»-ի տղաների ազդեցութիւնը այնքան մեծ էր մեզ վրայ, որ մեր տղաներն էլ նման ոճով բեմադրեցին «31 + 1 լցրած ատամը»:



24 ժամ ըմբռնել երեւանի ծայրը, եւ ոչ միայն ծայրը, այլեւ պատկերը:

Ներկայ պայմաններում, իրանահայութեանը հասանելի են հայկական հինգ հեռուստաալիքներ՝ «Հ1», «Շանթ», «Արմենիա», «Երկիր Մեդիա» եւ «Կենտրոն»: Ընդհանրութեան մէջ այս ալիքներից եթեր են տրուում տարբեր հաղորդումներ: «Հ1»-ը լինելով պետական հանրային հեռուստաալիք, բնականաբար աւելի պաշտօնական եւ քարոզչական բնութի հաղորդումներ է եթերում,

յաստան»-ը եւ հիմնականում հաղորդումները դառնում են այդ կուսակցութեան գործունէութեան շուրջ:

Այս առումով մասամբ տարբեր են «Շանթ»-ը եւ «Արմենիա»-ն. նրանք եւս թէեւ ունեն լրատական բաժին եւ քաղաքական-քարոզչական հաղորդումներ, բայց եւ հեռու են միւսների կտրուկ ու բացայայտ կողմնորոշումից եւ իրենց մօտեցումներով աւելի զուսպ են: Նոյնիսկ «Շանթ»-ի «Հորիզոն» լրատական հաղորդումը, այնքան է սար ու ձոր ընկնում եւ աշխարհի ամենահեռուոր անկիւնների դէպքերին ու աղետներին կամ հենց Հայաստանում պատահող մանր-մունր ատուկ-թարներին անդրադառնում, որ հեռուստադիտողը մոռանում է, որ կայ մի Հայաստան էլ, որտեղ քաղաքատնտեսական շատ բարդ իրավիճակ է տիրում եւ հենց այդ օրը երեւանի կենտրոնում բազմահազարանոց հանրահաւաք է տեղի ունեցել: Ընդհանուր առմամբ թւում է, թէ այդ հաղորդումները պատրաստուում են յատկապէս սփիւռքահայութեան համար, յաճախ լուրերը վերաբերում են պետական, պաշտօնական այցելութիւններին ու յայտարարութիւններին, ցեղասպանութեանն ու Հայ Դատին, իսկ քանի որ արտասահմանում ապրող հայը հեռու է եւ բնականաբար չի կարող իրազեկ լինել երկրի ներքին անց ու դարձերից, թերաճում են ներքին անց ու դարձերի ներկայացման մէջ: Ընդհանուր առմամբ այս հինգ ալիքների լրատական ու քաղաքական հաղորդումները շատ կցկտուր ու միակողմանի պատկեր են ներկայացնում երկրի քաղաքատնտեսական իրականութիւններից՝ իւրաքանչիւրն ըստ իր քաղաքական կողմնորոշման եւ իշխանութիւնների հանդէպ որդեգրած դիրքորոշման:

Այնուամենայնիւ այս ալիքների շնորհիւ տեղեկանում ենք ոչ

միայն Հայաստանի եւ աշխարհի ամենակարեւոր իրադարձութիւնների մասին, այլեւ ծանօթանում ենք այս կամ այն երկրում ապրող հայերի վիճակին, իսկ «Շանթ»-ի «Հայկական աշխարհ» հաղորդման միջոցով պատկերացում կազմում հայ ծեռներեց ու հանրայայտ այնպիսի դէմքերի հետ, որոնց մասին մինչ այդ չէիք էլ լսել, եւ ակամայ լցւում ենք ազգային հպարտութեամբ:

Հայկական ալիքների եթերաժամը մեծ մասամբ լցւում է մի քանի անգամ կրկնող հայկական ու լատինամերիկեան սերիալներով, որոնք ի դէպ լայն խաւի զբաղմունքի միջոցն են դարձել: Այս ալիքներից եթեր տրուող լատինամերիկեան ամենօրեայ սերիալները, պատրաստուած են ընտանեկան ու ընկերական յարաբերութիւններին միահիւսւած քրեական յանցագործութիւնների սիւժէներով: Դրանք լի են թեթեւ ու երբեմն մեր մշակութիւն անյարիր ու անհասկանալի դուազներով: Այս սերիալների մէջ արժէ անդրադառնալ յատկապէս հայկական արտադրանքներին, որոնք ընդհանուր գծերով թէեւ չեն տարբերում նախորդներից՝ արտասահմանեան տարբերակից, բայց եւ ունեն առանձնայատկութիւններ: Այս ֆիլմերի շնորհիւ, առաւել քան որեւէ լուրջ ու վերլուծական գրոյցի, կարելի է պատկերացում կազմել տարբեր խաւերի ու տարիքի պատկանող հայաստանցի մարդու կերպարի, ընտանիքի, հասարակական յարաբերութիւնների, տնտեսական վիճակի մասին: Ընտանեկան դաւաճանութիւնը, տնտեսական անապահովութիւնից դրդւած արտագաղթը եւ ընտանիքների քայքայումը, կաշառակերութիւնը եւ սոցիալական անարդարութիւնը, յանցաւոր աշխարհի ներկայացուցիչների գործելաոճը եւ խեղճ զոհերի անճարակութիւնը, վերնախաւի անկարագրելի վայելքները եւ հակառակ ծայրում տառապող գործա-

զուրկ ու թոշակոռու մարդկանց խեղճութիւնը ... այս բոլորը ցուցադրւում են հէնց այդ ֆիլմերում: Այս ուղղութեամբ հետաքրքիր են նաեւ երգիծական հաղորդումները՝ «Շանթ»-ի «Վիտամին ակումբ»-ը, «Արմենիա»-ի «Կարգին Սերիալ»-ը, «YERE1»-ը եւ «32 ատամը», իւրաքանչիւրը երգիծական սուր հայեացքով որսում ու ծաղրի առարկայ է դարձնում մարդկային ու հասարակական արատները: Այս հաղորդումները թէեւ երբեմն այնքան էլ հասկանալի չեն սփիւռքահային, որը ծանօթ չէ հայաստանեան այս ու այն խաւի յատուկ ոճին ու ժարգոնին, կամ այս ու այն յատուկ դէմքին, այնուամենայնիւ շատ բան են ասում օրինակ նախագահական ընտրութիւնների շեմին կանգնած ժողովրդի, կուսակցութիւնների ու թեկնածուների քարոզարշաւի մասին: Այս ուղղութեամբ շատ դիպուկ են յատկապէս «Արմենիա»-ի հաղորդումները: Մասամբ երգիծական թեթեւ սերիալների մէջ աչքի է ընկնում յատկապէս «Շանթ»-ի «Բանակում»-ը, որը ներկայացնում է իբր հայկական բանակում ծառայող զինւորների առօրեան: Կատակը՝ կատակ, բայց երբ լուրեր ես լսում բանակում անցնող իրական դէպքերի մասին, ակամայ մտածում ես, որ եթէ այս բոլոր ծիծաղաշարժ դէպքերը իրականում կատարւեն ի՞նչ կը ստացւի հայկական բանակից...: Ուզում ենք հաւատալ, որ այդ բոլորը լոկ մեզ ծիծաղեցնելու համար ֆանտազիայի արդիւնք են եւ հայոց բանակում երբեւիցէ որեւէ զինւոր չի ստորացւում սպայի կողմից, դաւաճանում կամ ծեծի ենթարկւում զինընկերոջ կողմից:

Իմիջիայլոց, հարկ է նշել նաեւ որ այս, նոյնիսկ անարեստ ֆիլմերի միջոցով հարստանում է սփիւռքահայի բառապաշարը, լեզուն, իհարկէ եթէ անտեսենք ժարգոնների եւ ռուսերէն բառերի գործածութիւնը, որոնք բացասական ազդե-

ցութիւն ունեն յատկապէս մատաղ սերնդի լեզւի վրայ: Ձանազան հաղորդումների շնորհիւ ընդհանուր առմամբ զարգանում է նաեւ նրանց պատմամշակութային ընդհանուր գիտելիքները:

Այս ալիքների հաղորդումների մէջ սփիւռքահայութեան ուշադրութեանն է արժանանում յատկապէս երգի ու պարի եւ այլ մրցութիւն-փառատօները, որոնց ուշիւշով հետեւում են բոլորը: Իրանահայերը թէեւ չեն կարողանում քւէարկել բայց դա չի խանգարում նրանց, որ մրցութեան մէջ մտնեն, կարծիք կազմեն եւ զրուցեն համերգների ու առանձին ելոյթի՝ պարողի կամ երգիչի մասին: Այս կարգի հաղորդումները՝ «Թաքնւած տաղանդ»-ը, «Սուպեր Սթար»-ը, «Պարահանդէս»-ը, «Գեղասահքի փառատօն»-ը եւ այլն, որոնց երբեմն մասնակցել են կարող նաեւ սփիւռքահայերը, լայն ժողովրդականութիւն են վայելում եւ մեծ հաճոյք պատճառում թէ՛ մեծերին եւ թէ՛ փոքրերին, եւ այս առումով անփոխարինելի դեր խաղում հայրենիք-սփիւռք մշակութային կապի ամրապնդման ուղղութեամբ: Պակաս հետաքրքիր չեն նաեւ օրինակ «Կենտրոն» ալիքի «Ուրւագիծ»-ի ու «Դիպած»-ի եւ «Երկիր Մեդիա»-ի «Կռախնձոր»-ի պէս հաղորդումները, որոնց գրոյցների միջոցով հեռուստադիտողը ծանօթանում է որեւէ նշանաւոր գործչի կեանքի կամ գործունէութեան մանրամասն հանգամանքներին, ակամատեսը լինում որեւէ երեւոյթի իրական ու կենդանի պատկերին, եւ մի խօսքով ընթացիկ կեանքի որեւէ անկիւնին:

Այս բոլորն ի նկատի ունենալով, Նոր տարւայ սեմին կանգնած, հայկական հեռուստաալիքներին մաղթում ենք անխափան, առանց սահմանափակումների, լայնարձակ սահմաններով ու հորիզոնով եթեր: Չէ՞ որ մենք, ուր որ էլ լինենք, ամէն օր ու ամէն պահ սպասում ենք նրանց...

«ՋՈՒՐ ՏՈՒՐ, ԿԵԱՆՔ ՊԱՐԳԵԻՐ»

Կոլիա Տէր Յովհաննիսեան



Նրանք, ովքեր յաճախ են լինում Հայաստանում, գիտեն, որ հայկական հեռուստաընկերությունների արբանեակային գովազդերը տարբերվում են տեղական գովազդերից:

Արբանեակային գովազդերը աւելի երկարատեւ են (ժամանակ լցնող) եւ օժտւած են սփիւռքահայութեանը հետաքրքրող թեմաներով: «Ջերմուկ»-ի՝ Օպերայի շէնքի հիմնադրման ու շինարարութեան պատմութեան, առողջարանների եւ եղնիկների ողիսականի երիցս կրկնւած ու վաղուց տաղտկալի դարձած կադրերին համընթաց, վերջերս,

էկրանի վրայ է Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Ջուր տուր, կեանք պարգեւիր» նշանաբանով գովազդերի մոր շարքը, որն իր տրամաբանական աւարտն ունեցաւ նոյն հիմնադրամի թելեմարաթոնի աւարտից յետոյ:

Թէ որքանով էր ազդեցիկ գովազդների այս շարքը, դա պիտի թողնել մասնագետների վճռին, իսկ այս յօււածով մեր նպատակն է անդրադառնալ գովազդերի այսպես ասած կողմանկի ազդեցութեանը (side effect): Օրինակ նրանցից մէկը սկսւում է հայրենական անջրդի հողերի,

միւսը՝ հրդեհի մատնւած շէնքի կամ երկունքի ցաւերի մէջ երիտասարդ մօրը յառած՝ տագնապալի հայեացքների ցուցադրումներով: Հողագործը, հրդեհւած շէնքը եւ ծննդատան անձնակազմը սպասում են ջրի: Տեսարանը աւելի պատկերաւոր դարձնելու համար ցուցադրւում է նորագոյն սարքաւորումներով օժտւած ծննդատան ջրի ծորակը, որից ջուր չի հոսում: Այս կադրերին յաջորդում է Հայաստան Համահայկական Հիմնադրամի դրամահաւաքի համար նախատեսւած տաղաւարը Լոս Անջելեսում, ուր երիտասարդ

աղջիկներն ու տղաները հեռախօսների միջոցով ընդունում են դրամական նպաստները: Եւ ահա յայտնում են, որ ջուր չկայ: «Ընդունեց», - հրահանգը գրանցում է գեղեցկադէմ աղջիկը: Դրան անմիջապէս հետեւում է Հայաստան Համահայկական Հիմնադրամ* պիտակը կրող համազգեստաւոր խմբերի շտապ գործողութիւնների ցուցադրումը: Նոյն պիտակով մեքենաները սլանում են եւ տեղ հասնելուն պէ՝ մեքենաներից դուրս են նետւում համազգեստաւոր տղաները: Չգիտես որտեղից (մեքենաները սովորական մարդատար են, այլ ոչ ջրատար տանկերներ) յայտնւում են ջրի ռետինէ երկու հաստ խողովակներ՝ նոյնպէս Հիմնադրամի պիտակները վրան. անմիջապէս «օգնող ձեռքերը» միացնում են խողովակները. նոյն ձեռքերը եռանդով բացում են պտուտակաւոր մեծ ծորակը, ջուրը կլկլաւով յորդում է խողովակների մէջ: Մի տեղ անջրդի ճաքճքւած հողերը տեղնուտեղը ոռոգւում են, ծլարծակում. ուրախութիւն է, ցնծութիւն: Մի այլ կադրում ուժեղ շիթով ջուրը մղւում է դէպի այրուղ շէնքի լուսամուտները, որի արդիւնքում կրակը մարում է: Ծննդատանը ծննդաբերող բժշկի ձեռքերի մէջ երեւում է նոր ծնւած երեխան (ասել է, եթէ ժամանակին չհասնէին, երեխան չէր ծնւի) ու լողացւում է բերւած ջրով... Ծննդկանը երջանիկ ժպտում է:

Հասկանալի է, որ այս բոլոր կադրերը կրում են խորհրդանշական բնոյթ: Նպատակը բարի է՝ ջուր հասցնել խողովակներով, որոնց պահանջը շատ է զգացւում Հայաստանում: Սակայն գովազդերի սցենարները առաջ են բերում հակասական զգացումներ:

Նախ հարց է առաջանում, թէ ի՞նչն է պակաս Հայաստանում՝

ջո՞րը, թէ՞ ջրատար խողովակը: Հայաստանը լինելով լեռնային երկիր, հարուստ է ջրի բնական ռեսուրսներով ու եթէ ջրի պակաս է զգացւում, ապա ոչ թէ չգոյութեան, այլ խորհրդային շրջանից մնացած ջրամատակարարման հին ցանցերի անմխիթար վիճակի պատճառով: Ուստի «Ջուր տուր»-ի փոխարէն աւելի լա՛ւ չէր գովազդի նշանաբանում ասւել՝ օրինակ, «Ջուր հասցրու, օգնիր երկրի բարգաւաճմանը»: Խօսք չկայ, ջուրը կեանք է պարգեւում, բայց, արդեօք, այդ աստիճանի ծարա՛ւ է Հայաստանը, ի՞նչ երկիրը հոգեվարքի մէջ չէ ջրի պակասի պատճառով: Այսպիսով գովազդը ստանում է նաեւ անուղղակի քննադատութեան բնոյթ:

Երկրորդ՝ գովազդերի սցենարները բնաւ համոզիչ չեն, թերեւս բացի հրդեհից, որի դէպքում ջուրը շտապ տեղ հասցնելը անհրաժեշտութիւն է. այստեղ էլ, գովազդում պատկերւած շտապօղականութիւնը ընկալւում է ուղղակի՝ աւելի շատ հրդեհը մարելու, քան ջուր «տալու» իմաստով, որով աղօտանում է բուն խորհուրդը: Իսկ անջրդի հողերին կամ ծննդատանը այդքան կայծակնային եւ ոչ ընդունւած միջոցներով ջուր հասցնելը միանգամայն անբնական է եւ անիրական: Ախր, ո՞վ է տեսել, հողագործին շտապ օգնութեան ձեւով ջուր հասցնեն իր չորացած ու ճաքճքած հողերը երաշտից անմիջապէս փրկելու համար...

Երրորդ, եւ որ գլխաւորն է, այդ գովազդերի շարքն ամէն անգամ դիտելիս՝ գլուխ է բարձրացնում հայրենասիրական, ազգային նախանձախնդրութիւնը: Միթէ Արարատեան դաշտում իրօք կա՞ն աֆրիկեան որոշ երկրներ յիշեցնող, այդ աստիճանի անջրդի, ճաքճքւած հողատարածքներ:

Եթէ կան, ապա համոզւածօրէն կարելի է պնդել, որ դա ոչ թէ ջրի կամ ոռոգման տեխնիկայի պակասի, այլ՝ պարզապէս հողատիրոջ անտարբերութեան, կամ միւթական սուղ պայմանների, կամ արտագաղթի արդիւնքում հողը թափուր թողնելու հետեւանք է:

Մի՞թէ Հայաստանի ծննդատներում ջրի պակասի պատճառով երեխաներ չեն ծնւում...

Մի՞թէ Հայաստանի հրշէջ ծառայութեան նորագոյն մեքենաները ջուր չունեն:

Լաւ է, որ այս գովազդերը արբանեակային են եւ ոչ տեղական, որովհետեւ Հայաստանի ժողովուրդը վաղուց բեզարած սփռնափայտի ամպագոռոռ, «սրտցաւ» օգնութիւններից, իրեն այնքան էլ լաւ չէր զգայ նման կադրեր տեսնելիս: Իսկ դրսում, Հայաստանի մասին ինչ գաղափար կը կազմեն դեռ հայրենիք ոտք չդրած հայորդիները կամ նոյնիսկ օտարները՝ այս շարքը դիտելուց յետոյ:

Իհարկէ դրատելի է Հայաստան Համահայկական Հիմնադրամի ճիգը՝ լինի ջրով, թէ ջրատար խողովակներով Հայաստանին օգնելու ուղղութեամբ, այնուամենայնիւ, պէտք է նկատի առնւի այն փաստը, որ հիմնադրամային հնարաւորութիւններով կը կարգաւորւի երկրի ջրամատակարարման միայն մի փոքրիկ մասը. հետեւաբար նման նշանաբանով գովազդերի ցուցադրումը զուցէ ծառայում է իր բուն նպատակին, բայց նաեւ անբաժանկատօրէն վնասում է երկրի վարկին ու միջազգային հեղինակութեանը:

Նոյեմբեր, 2011

*Պիտակը պատկերում է Եռագոյնը:

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Հրաչ Քալսահակեան

Սուրիահայ գաղութը, Միջին Արեւելքի հայկական այլ գաղութներու նման, ենթակայ եղած է ամէն տեսակի քաղաքական, տնտեսական եւ ընկերային վերիվարումներու:

Յայտնի է, որ Ցեղասպանութենէն անմիջապէս ետք գաղութը ունեցած է սուար թաքանակ, բայց տասնամեակներու ընթացքին այդ թիւը նօսրացած է ներգաղթի (ղեպի Հայաստան) եւ արտագաղթի (ղեպի Եւրոպա, Ամերիկա եւ այլուր) պատճառներով:

Անցեալ դարու յիսունական թականներուն, արաբական ազգայնական հոսանքին հետեւանքով, սուրիահայութիւնը ենթարկեցաւ բազմաթիւ սեղմումներու,

կարգ մը համայնքային ղեկավարներ հալածեցան, դպրոցները փակեցան, իսկ վերաբացելէ ետք դուրեցան պետական մանրակրկիտ հսկողութեան տակ, հայկական դասապահերը խիստ կրճատեցան եւ հայերէնին տրեցաւ կրօնական ծիսակատարութիւններու լեզւի կարգավիճակ: Պաղ պատերազմի հետեւանքով հայութիւնը ծանր վնասներու ենթարկեցաւ:

Տնտեսական առումով Սուրիան հետզհետէ որդեգրեց կեդրոնացած ծրագրաւորումի քաղաքականութիւն, պարագայ մը որ շատ մը կէտերու մէջ նմանութիւններ ունէր նախկին Սովետական Միութեան հետ: Հայերու եւ այլ

հատաճներու վայելած տնտեսական յարաբերական բարօրութիւնը մեծ մասամբ արդիւնքն էր արտաքին պարագայական ազդակներու: Օրինակի համար, Լիբանանի տնտեսական քայքայումը, Իրաքի շրջափակումը, Թուրքիոյ հետ տնտեսական յարաբերութիւններու ընդլայնումը, եւ այլն, այս կամ այն ձեւով սատարեցին բնակչութեան տնտեսական յարաճուն վիճակի ապահովման, ինչ որ շատերուն մղեց նիւթապէս բաւարար զգալու եւ շարունակելու ինքնամիտ կեանքը:

Ըլլալով միշտ ապաքաղաքականացած, հայութեան (եւ շատերուն) համար անսպասելի էին սուրիական քաղաքական իրավի-





ճակի ներկայ զարգացումները, այն աստիճան, որ ութ ամիսներ ետք սուրիահայության մեծամասնությունը տակալին կը շարունակէ ուրանալ զարգացումները եւ կը յամենայ կարծել թէ ամէն ինչ կրնայ մոյն վիճակին դառնալ:

Ապագայ դրութիւնը, իմ անձնական կարծիքով, վատ չի կրնար ըլլալ հայերուն համար: Նախ պէտք է ըսել, որ հայերը այնքան աննշան փոքրամասնութիւն են 23 միլիոն հասնող բնակչութեան մը համար, որ իրենց դէմ կանխամտածած հաւաքական վնաս կարելի չէ ակնկալել: Անոնք տակալին կը վայելեն ճարտար քաղաքացիի համբաւ, բայց անշուշտ բարոյական առումով արժէզրկած պիտի ըլլան եթէ չկարենան, թէկուզ ուշացած, համասուրիական ժողովրդավարական տեսլականին հետ առնչիլ: Կը խորհիմ թէ սուրիահայության մեծ մասը պիտի շարունակէ ապրիլ իր կեանքը սովորականին նման, քա-

նի որ ապագայ Սուրիան պերճանքը պիտի չունենայ անցեալի սխալները կրկնելու, իսկ երկրի տնտեսական յառաջադիմութիւնը եւ զարգացումը կարելոր բնագաւառներ են, ուր հայերու ներդրումը արժէք կրնայ ներկայացնել:

Տարիներու ընթացքին սուրիահայ գաղութին մէջ ձեւաւորեցաւ այնպիսի ղեկավար խաւ մը որ, օսմանեան օրերէն ժառանգած եւ անկախ Սուրիոյ մէջ պաշտօնապէս ամրագրած իրաւունքներով օժտուած, համատարած վարեց գաղութին գործերը՝ զարկ տալով մշակութային, ընկերային, կրօնական եւ շինարարական աշխատանքներուն: Հայախօս գաղութ ըլլալը դարձաւ կարելորագոյն դրամագլուխ: Բայց փաստը կը մնայ այն, որ գաղութի ներքին կառոյցները կը տառապին այդ խաւի տասնամեակներու տիրապետութենէն: Գոնէ մարդուժի առումով, յստակ է, թէ մեծ թիւով արհեստավարժ եւ մասնագէտ

մարդիկ հեռու մնացած են ազգային հասարակական կեանքէն՝ սոյն վերնախաւին մենատիրական ախորժակներուն պատճառով:

Հայ ղեկավարութիւնը կրնար անշուշտ աւելի հաւասարակշռւած մօտենալ Սուրիոյ մէջ ծաւալող նորագոյն զարգացումներուն նկատմամբ, մանաւանդ որ կայ նախկին փորձ մը, երբ Սուրիոյ եւ





Թուրքիոյ չափազանց մօտիկութիւնը սուրիահայերը մղած էր զուսպ ըլլալ հայ դատի հետապնդումի եղանակներուն նկատմամբ: Ղեկավարութիւնը կրնար մոյն խոհեմութիւնը դրսեւորել նաեւ այսօր եւ չէզոքութիւն պահպանել: Այսքան տարի իր մասնակցութիւնը չունենալով սուրիական քաղաքական կեանքին մէջ, կրնար տարի մը եւս մոյն աննկատ կեցածքը շարունակել: Այս, այնպիսի ժամանակ, երբ սուրիական ընդդիմութիւնը, հակառակ հազարաւոր զոհերուն, գինեալ լուծումի տարբերակէն հեռու մնալու անընդհատ հաւաստիքներ կու տար:

Հայութեան քաղաքական կեցածքին մէջ կարելոր դեր ունեցած է Լիբանանի հայութեան մեծամասնութեան քաղաքական դիրքորոշումը սուրիական ներկայ վարչակարգին կողքին: Ասոր վրայ կարելի է աւելցնել նաեւ հայերու աւանդական արդարացի անվստահութիւնը Թուրքիոյ կա-

ռավարութեան նկատմամբ, կառավարութիւն, որ օրըստօրէ կը դիրքորոշւի սուրիացի ընդդիմադիր հաւաքականութեան կողքին:

Որպէս հետեւանք, հայութեան մօտ ստեղծած է երկրի մեծամասնութիւնը կազմող բնակչութեան նկատմամբ անվստահութեան մթնոլորտ, մոյն այդ բնակչութեան, որ հարիւր տարիներ առաջ ընդունած էր հայերը Ցեղասպանութեան ժամանակ եւ որու հետ հայերը տասնամեակներու գոյակցութեան եւ տնտեսական գործակցութեան փորձ կուտակած էին:

Սուրիահայութիւնը շարունակական արտագաղթի վիճակ մը կ'ապրի վերջին յիսուն տարիներուն, որու հետեւանքով գաղութին թաքսանակը հասած է վաթսուն հազարի սահմանները, իսկ հայախօսութեան տոկոսը օրըստօրէ կը պակսի: Արտագաղթը ընդունած երեւոյթ դարձած է սուրիահայ ընտանիքներուն համար, որոնք ունին ազգականներ շատ մը երկրներու մէջ: Չմէ խորհիր, որ արտագաղթը կտրականապէս պիտի աճի յաջորդող տարիներուն: Արեւմուտքի երկրները կրնան անշուշտ այդ հոսանքը աշխուժացնել շնորհելով մուտքի եւ ապրելու արտօնագրեր: Եթէ իրավիճակը փոխուի, առաջին հերթին սուրիահայը պիտի ուզէ Պէյրութ փոխադրուիլ, անկէ ետք այլ երկիր անցնելու հեռանկարով:

Անհատական մակարդակի վրայ սուրիահայը Հայաստան հաստատուելու հեռանկար չի հետապնդեր, իսկ հաւաքական մակարդակի վրայ այդպիսի աշխատանք տանող մարմին չկայ արդէն: Սուրիահայերուն համար յայտնի է թէ Հայաստանի կառավարութիւնը ի զօրու չէ ընդունելու եւ տեղաու-

րելու հայ զանգւածները: Միայն ֆիզիկական անմիջական վտանգի մը պարագային սուրիահայը պիտի փորձէ Հայաստան տեղափոխուիլ, անկէ առաջ սակայն նախապատուութիւնը տալով Լիբանանին: Ամէն պարագայի Հայաստան (դժբախտաբար) կրնայ ծառայել որպէս հանգրուան ֆիզիկական վտանգի սպառումէն ետք այլ տեղ գաղթելու:

Հայաստան Միջին Արեւելքի հայութեան կրնայ օգտակար դառնալ նախ եւ առաջ ինքնավստահ եւ հեռանկարային քաղաքականութիւն վարելով շրջանէն ներս: Կրնայ օգնել ժամանակակից խնդիրներուն նպաստաւոր լուծումներ առաջադրելով:

Երկարժամկէտ՝ Հայաստան կրնայ շրջանի հայութեան օգտակար դառնալ երբ տնտեսապէս եւ քաղաքականօրէն ունենայ բաւականաչափ լծակներ: Դժբախտաբար, ներկայ վիճակը յոյս չի ներշնչեր նման կտրուկ փոփոխութեան մը հաշտոյն:

Մինչեւ որ Հայաստան նաճէ այդպիսի կարգավիճակ, Միջին Արեւելքի հայերը անցած պիտի ըլլան պատմութեան գիրկը կամ այնքան պիտի համակերպած ըլլան իրենց մոր կամ վերածաղկած միջավայրերուն, որ այլեւս Հայաստան պիտի անոնց համար ունենայ խիստ վերացական արժէք:



ԱՆՔՐԷՂ ԵՍԴՈՒԲԱՐԷՆ ՇԱՀԵԼ Է «ՍԿՈՒՂ» ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿԸ



Ֆրանսիա, Լիլ, «Սկուպ» լուսանկարչական փառատոն: Ալֆրեդ Եաղուբզադէի «Լիբիայի յեղափոխութիւնը» լուսանկարների շարանը շահել է փառատոնի 26-րդ շրջանի (1-11 Դեկտեմբեր 2011) լրատվական բաժնի առաջին մրցանակը: Եաղուբզադէն այս հարցին, թէ իր կարծիքով ինչու են իր լուսանկարները շահել այս մրցանակը, պատասխանում է. «Գուցէ այն պատճառով, որ իմ գործը միւսներից աւելի համակողմանի եւ ամբողջական է եղել: Ես լուսանկարել եմ Լիբիայի ժողովրդական ցույցերը, զոհերին, ու նաեւ ՆԱՏՕ-ի ուժերի միջոցով սպանւած Գադաֆիի զինուորներին, որոնց պատկերները քիչ արձագանք է ունեցել արեւմտեան





մանուլում»: Եաղուբզադեն լուսանկարել է նաեւ Եգիպտոսի դէպքերը: Նրա վերջին գործը Եգիպտոսի՝ երկրորդ յեղափոխութիւն կոչւած, Նոյեմբերի 21-22-ի ընտրութիւնների լուսանկարումն էր: Եգիպտոսում նա զինուորների միջոցով խոշտանգման է ենթարկւել եւ հրազենային վնասուածք ստացել:

Ալֆրէդ Եաղուբզադեն ծնւել է 1958 թականին, Թեհրանում: Հայրը հայ, իսկ մայրը ասորի էր: Նա լուսանկարչութիւնը սովորել է փորձառութեամբ: Սկսել է լուսանկարել Իրանի իսլամական յեղափոխութեան օրերին՝ արձանագրելով պատմական այդ իրադարձութիւնները: Իրան-Իրաք պատերազմից լուսանկարել է «Ասոշիէթըդ Փրես»-ի եւ «Սիգմա» լուսանկարչական գործակալութեան համար: Հրատարակել է լուսանկարների երկու հաւաքածու՝ «Իրան-Իրաք

պատերազմը» եւ «Պատերազմի դէմքերը» խորագրով: Նա լուսանկարել է քրիստոնէական ծեսերը 24 երկրներում եւ դրանք հրատարակել է «Քրիստոնէութիւնը աշխարհում» անունով գրքում:



Եգիպտացի ցուցարարները խնամում են Եաղուբզադէին, որը ցոյցերը լուսնկարելիս վիրատուել է Եգիպտացի զինուորների միջոցով






ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՐԻԵՍ

Փողացային արևեստի նպատակն է արևեստը քաղաքային միջավայրը ներմուծել եւ այն միաձուլել այդ միջավայրի հետ: Փողոցային արևեստի գործերը աչքի են ընկնում հնարամտությամբ, նրբանկատությամբ եւ անակնկալներով: Դա միաժամանակ զանազանում է որմնագրութիւնից կամ Գրաֆիտիից՝ թէ՛ նիւթերի եւ թէ՛ միջոցների եւ տեխնիկաների ընտրութեան առումով. դա աւելի լայն է ու բազմազան: Այս էջերում տպագրւած նմուշներից ընթերցողը կարող է գաղափար կազմել փողոցային արևեստի տեսակների եւ մշակութային իւրայատկութիւնների մասին:











Ք Ա Մ Բ Ի Չ Դ Ե Ր Ա Մ Բ Ա Խ Շ



2011-Ի ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տարավերջը միշտ էլ յարմար առիթ է վերլիշելու անցեալ տարւայ ընթացքում տեղի ունեցած իրադարձութիւնները: Այս տարի էլ միւս տարիների պէս տեղի ունեցան բազմաթիւ մարզական իրադարձութիւններ, որոնցից ամենակարեւորները հատենալն էին.

Ասիայի Ֆուտբոլի Գաւաթ

2011 թւականի Յունւարի 7-ից մինչեւ 29-ը Կատարում, կայացաւ Ասիայի տղամարդկանց ֆուտբոլի գաւաթը: Մրցութիւններին շատ բարձր սպասելիքներով նաեւ մասնակցել էր Իրանի ազգային հաւաքականը, սակայն, ցաւօք սրտի, նրանք չկարողացան իրենց, այնպէս որ պէտք էր, դրսեւորել եւ քառորդ եզրափակիչ փուլում պարտուեցին Զարաւային Կորէայից: Մրցութիւնների ընթացքում ակնյայտ էր ճապոնիայի եւ Զարաւային Կորէայի ֆուտբոլի բարձր մակարդակը: Այս տարւայ մրցութիւնների եզրափակիչում ճապոնիան, յաղթելով Աւստրալիային, դարձաւ մրցութիւնների

ախտյեան:

Ալփայինի Դահուկավարութիւն

Փետրւար ամիսը յայտնի է որպէս դահուկավարութեան մրցութիւնների ամիս: Այս տարի Փետրւարի



7-ից մինչև 20-ը տեղի ունեցան Ալփայինի մրցութիւնները: Ընդհանրութեան մէջ աստրիացի դահուկավարները հաւաքելով 4 ոսկէ, 3 արծաթէ եւ 1 բրոնզէ մեդալներ, գրաւեցին առաջին տեղը:

Եւրոպայի Ընթշամարտի Առաջնութիւն



Մարտի 29-ից մինչև Ապրիլի 3-ը Գերմանիայի Դորտմոնդ քաղաքում ընթանում էր Եւրոպայի ընթշամարտի առաջնութեան մրցութիւնները, որին Հայաստանի ընթշամարտի ազգային հաւաքականը ազատ ոճում անյաջող հանդիսացաւ: Նրանց միայն յաջողեց ձեռք բերել ընդամենը 1 արծաթէ մեդալ եւ 12-րդ տեղում կանգնել: Աղբրեջանը հաւաքելով 5 ոսկէ եւ 4 բրոնզէ մեդալներ դարձաւ մրցութիւնների ախոյեան: Սակայն յունահռոմէական ոճում Հայաստանի հաւաքականին յաջողեց, ձեռք բերելով 1 ոսկէ, 1 արծաթէ եւ 2 բրոնզէ մեդալներ, գրաւել 2-րդ տեղը:

Տեկուանդոյի Միջազգային Մրցութիւններ

Տեկուանդոն կորէական մարտական մարզածէ է, որն այսօր համարւում է ամենասիրած եւ ամենատարածած մարտական

մարզածէներից մէկը: Իրանի ազգային հաւաքականը միշտ էլ փայլուն արդիւնքներ է արձանագրել այս մարզաճիւղում: Այս տարւայ մրցութիւններին էլ Իրանի տեկուանդոստներին յաջողեց Հարաւային Կորէայից յետոյ գրաւել 2-րդ տեղը: Յիշեցնենք, որ այս տարւայ մրցութիւնները կա-

րը Հարաւային Ամերիկայի երկրների ֆուտբոլային ամենակարեւոր մրցաշարն է: Իսկ Արգենտինայի, Բրազիլիայի եւ Ուրուգուայի ազգային հաւաքականների ներկայութիւնը այս մրցութիւններն անելի է գեղեցկացնում: Այս տարւայ Արգենտինայում կայացող մրցութիւններին Ուրուգուայի ազգային հաւաքականին յաջողեց գրաւել առաջին տեղը: Մինչ հիմա Արգենտինայի եւ Ուրուգուայի ազգային հաւաքականներին յաջողել է 15 անգամ դառնալ այս մրցութիւնների ախոյեան:


Աշխարհի Ծանրամարտի Առաջնութիւն

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում, այս տարի կայացաւ ծանրամարտի միջազգային մրցութիւնները, որում ի վերջոյ իրականացաւ մարզասէր իրանցիների երկար սպասած երազանքը, քանի որ գերծանր քաշային կարգում իրանցի Բեհդադ Սալիմիին յաջողեց տեղաշարժել աշխարհի ռեկորդը:

յանում էր հենց ինքը Հարաւային Կորէայի Գունգաջու քաղաքում, Մայիսի 1-ից մինչև 6-ը:

Կոպա Ամերիկա

Կոպա Ամերիկայի մրցութիւններ



6	2	8			9			
1		9		5	6			4
5			8	7	2			1
9			5	1		4	6	7
8		7					3	
	6			2		9		
		4	9		7	1		3
			2		1	7		9
	9	1				2	8	

	7	6	9	3				
			1		8	4		
3				2	6			
	4	5		8		1	3	
	1		5	6	7		9	
2			3	1			5	8
	6	8			2			5
7		4				9	8	2
	2				3	7	1	

6				1				
						8		7
	4				2			
		2				5		
	7		9		6			8
9				5				4
	2				8		6	
1		3		2		9		
			7					4

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ո	լ	ն	է	ի	ց	մ	ե	ծ	ա	դ	մ	ու	կ	
2	ս	ի	ր	ա	լ	ի	ր		ա	ն	ա	ր	ժ	ա	ն
3	կ	ն	ա	փ		ս	ր	ա	խ	ո	ց		ա	ր	ա
4	ե	ա	ն		ե	տ	ի	կ	ե	տ		ա	ս	տ	դ
5	դ	ր		ա	լ	ե	կ	ա	լ		ի	ու	պ		դ
6	ա		ծ	մ	ե	ռ		դ		պ	ա	լ	ա	տ	
7	ր	ե		ա	կ	ն	դ	ե	լ		ր		ո	ու	ս
8		պ	ա	լ	տ		ա	մ	ա	ն	ա	կ		Ֆ	ա
9	ս	ի	ք	ի	ր		ս	ի	զ	ո	ւ	ի	տ		թ
10	ի	ս	կ		ա	ճ		կ	ու	ր	ա	տ	ո	ր	
11	ս		տ	ա	կ	ա	շ	ո	ր		լ	ա	ր	ու	մ
12	ա	ս	ր		ա	ն	ու	ս		ս	ի	ն	ու	ս	
13	մ	ի	ա	լ	ն		մ		ի	ա	ն	ց		մ	ու
14		ն	կ	ա		դ	ի	մ	ա	կ		ու	լ		ն
15		ա	տ	ր	ճ	ա	ն	ա	կ		խ	մ	ի	լ	ք

Սու-Ղո-Քու

1-9 թվերը տեղադրել հորիզոնական եւ ուղղահայեաց սիւնեակներում այնպէս, որ ոչ մի թիւ չկրկնւի ոչ սիւնեակներում եւ ոչ էլ 3x3 տնակներում

Անցեալ համարի
պատմախառն

«Յոյս» երկշաբաթաբեր թըր ՎաճառուՄ է

«Փիթգա Լամաջու»

Ճիաբան Նարմկ - Միճան ۸۵

Թլֆն: ۷۷۸۴۳۵۳۹

«Յոյս» երկշաբաթաբեր թըր ՎաճառուՄ է

«Շիրմարդի» Կրպակ

Նարմկ - Անթէհայ Շիրմրճ Ենոբի

Թլֆն: ۰۹۱۲-۱۸۳۶۲۱۸

«Յոյս» երկշաբաթաբեր թըր ՎաճառուՄ է

«Արամ» ՎաճառաւոՄ

Ճիաբան ԳաՄ ՄԳա ֆրահանի - Գաին Եր ազ Միճան Շագ - Գլակ ۶۴

Թլֆն: ۸۸۳۰۳۴۷۸

«Յոյս» երկշաբաթաբեր թըր ՎաճառուՄ է

«ՓԱՍԱՐԳԱԴ» Շահր քէթաք

Եթար, Եաճ ազ Տէրորճի - Գլակ ۱۱۳

Տէր ԿԵաբ Գասար Գաճ

Թլֆն: ۷۷۶۳۱۵۱۶

Art system



Arthur , Alen , Alex



ԳճաՄաՄ ՄաՃինէհայ աճարի

ՏՍ Գ ԵճՄիր ԳաճԳրէհայ Լիզրի ՅոհրաֆաՃաՄ HP Գ Տորնի EPSON

Թլֆն: ۸۸۳۲۱۴۳۶-۷ Գ ۸۸۳۱۵۳۴۳-۴

ֆԿՏ: ۸۸۸۳۳۰۰۰

ԱճրՏ: Եհրան, Ճիաբան ԵիրանՏէր Ենոբի, Գաին Երազ Ճիաբան ՏՄիէ,

Տարէ ۷, ԳլիԿէ ՏոՄ, աաճ ۵

دیاسپورای واحدی وجود ندارد
ساختار جوامع دیاسپورای ارمنی
اصل مشارکت داوطلبانه
ویژگی‌های سازمان‌های تازه بنیاد دیاسپورا

مخاطرات دموکراتیزه کردن تشکیلات دیاسپورای ارمنی





ما و تلویزیون های مان

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهارونیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

کارمن آذریان

لیا خاچکیان

گارون سرکیسیان

آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استپانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، خیابان انقلاب، بین
ولی عصر و فلسطین، شماره ۱۰۴۸

تلفن: ۶۶۴۹۵۱۸۰

۶۶۴۹۲۶۹۳

تله-فاکس: ۶۶۴۹۵۲۰۸

نشانی وبسایت:

www.hooys.com

وبسایت فارسی:

http://farsi.hooys.com

پست الکترونیکی:

hooys@inbox.com

در این شماره

- ۲ در صفحات ارمنی این شماره
۳ سفر رئیس جمهور احمدی نژاد به ارمنستان
تورج خسروی
- ۴ مخاطرات دموکراتیزه کردن تشکیلات دیاسپورای ارمنی
جیوان طیبیان
ترجمه: روبرت صافاریان
درباره نویسنده
- ۵ دیاسپورای واحدی وجود ندارد / ساختار جوامع دیاسپورای ارمنی
۶ اصل مشارکت داوطلبانه
۷ اصلاحات: ویژگی های سازمان های تازه بنیاد دیاسپورا
۸ میراث توتالیتریسم (تمامیت طلبی)
۱۰ درباره ترجمه چند واژه (دیاسپورا، جامعه، وضعیت دولت بودن، میلت)
- ۱۲ جنبه های فرهنگی بازگشت ارمنه ایران به جمهوری ارمنستان (بخش دوم)
روزانا تساتوریان / ساتتیک مگردچیان

بخش ارمنی

- ۲ اطلاعیه خلیفه گری ارمنه اصفهان درباره استرداد اموال دزدیده شده موزه وانک
۳ کرسی زبان و ادبیات ارمنی دانشگاه آزاد در آستانه تعطیلی
کارمن آذریان
۴ تصویب قانون جرم قلمداد شدن انکار نسل کشی ارمنه در مجلس ملی فرانسه: چند دیدگاه
۶ صحنه سیاست ارمنستان در سال ۲۰۱۱
گیانه آبراهامیان

ما و تلویزیون های مان

- ۸ سریال های ارمنی و زندگی امروز
کولیا در هوانسیان
- ۹ برنامه های تلویزیونی ارمنی از نگاه ارمنه دیاسپورا
کارمن آذریان
- ۱۳ آبرسانی، اهدای زندگی
کولیا در هوانسیان

- ۱۵ آینده ارمنه خاورمیانه در پرتو تحولات سوریه
هراچ کالساهاکیان
- ۱۸ آلفرد یعقوب زاده برنده جایزه عکاسی اسکوپ
۲۰ هنر خیابانی
۲۳ کاریکاتورهای کامبیز درمبخش
۲۴ ورزش
آرمان در استپانیان
- ۲۶ سرگرمی

اما فارغ از واکنش دیپلماتیک ترکیه، کسانی نیز از این منظر که تصویب چنین قوانینی آزادی بیان را محدود می‌کند به انتقاد از آن پرداختند. آرا پایمان، بنیانگذار و رئیس موسسه تحقیقاتی مودوس ویونیدی که در زمینه حقوق بین‌الملل صاحب نظر است در پاسخ به این انتقادات می‌نویسد:

